

ՍՈՒՐԲ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅԵԿԵՑԻ

ՊՐԻՃՓՈՐԹ, ՔԸՆՔԻՔԸՐԸ  
Թելեփոն 333-8475



Հովհան  
Արք. Տ. Սարգսի Քհ. Գաշըգնեան  
Pastor  
Rev. Fr. SARKIS KASHIKJIAN

Res. Tel. 368 - 3532

Holy Ascension  
Armenian Church

1241 Barnum Avenue  
Bridgeport, Conn.  
Tel. 333 - 8475

Փետր. 3, 1964

Գերաշնորհ  
Տ. Սիռոն Ս. Արք. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
Նիւ Նորք

Սրբազն Հայր,

Եկեղեցւոյս Տարեկան Անդամական ժողովը տեղի ունեցաւ Յուն. 26,  
1964, Ս. Պատարագէն վերջ ըստ յայտարարութին: Ժողովը անցաւ շատ կանոնակիր եւ օրա-  
կարգի վրայ եղած հարցերը խաղաղ լուծում գտան #49 իրաւասու անդամներու ներկայու-  
թեամբ: Հոգաբարձութեան կազմին համար ընտրուեցան.

Տօքթ. Պերճ Հարապետեան  
Պր. Վարդան Ստամպուլ եան

Պր. Տիգրան Նաճարեան  
Պր. Ֆրետ Կրաչեան

Երեսփոխաններու անձնափոխանորդ ընտրուեցան.  
Տօքթ. Պերճ Հարապետեան եւ Պր. Յարութիւն ջուլ ճեան

Հոգաբարձութեան մնայուն անդամներէն Պր. Յովհաննէս Ստամպուլ եան, առողջական  
պատճառներով, իր համարականը ներկայացութած ըլլալով անոր տեղ պիտի հրաւիրեմ, Պր.  
Հերթ թէրգեանը, որ յաջորդ առաւելագոյն քուէ ստացողն է ընտրութեան ցանկին վրայ:  
Ներփակ կը գտնէք, Ընտրութեանց արդիւնքը անուներով եւ քուէներով, Հովհիւին  
Տարեկան Տեղեկագիրը, Հոգաբարձութեան ամփոփ Տեղեկագիրը, Նիւթական Հաշուէտուութիւնը,  
Նաեւ Առաջնորդարանին կողմէ ղրկուած Տարեկան Ընդհ. Տեղեկագիրի պատճէն, ամբողջաց-  
ուած եւ ստորագրուած:

Սրբազն Հայր, կը խնդրենք որ եթէ կարելի է շուտով վաւերացնէք ընտրութեանց ար-  
դիւնքը, որպէսզի կարենանք շուտով ընթացք տալ մեր եկեղեցական կործերուն: Այժմ  
միայն երկու հոգի ունինք Հոգաբարձութեան վրայ մնացած եւ գործերը յառաջ չեն ընթա-  
նար այնպէս ինչպէս որ պէտք է ըլլան:

Յայտնելով Զերդ Սրբազնութեան, մեր շնորհակալ ութիւնները, որդիական հաւատարմու-  
թիւնն ու յարգանքը, կը մաղթենք Զեզ առողջ արեւշտութիւն եւ Զեր Աստուածահանոյ եւ  
Սզգօգուտ գործերուն կատարեալ յաջողութիւն:

Մատչելով ի համբոյր Զեր Ս. Աջոյն  
Մատչելով ի համբոյր Զեր Ս. Աջոյն

Որդիական Սիրով եւ Յարգանօք

*Անոնք Ձեզ յաջութեան*

Սարգիս ՔՇՆՅ. Գաշըգնեան

Հոգեւոր Հովհաննէս

Ս. Համբարձում Հայոց Եկեղեցւոյ  
Պրիճը Բրթ, Քէնն:

*Խաչառու*  
*Արքայի*